Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-660[2]-17.06.2020-ՊԻ-011

ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ժե) կետով՝

«ժե) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»
~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ժե) կետով՝

«ժե) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	**Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
	ՀՀ Կառավարություն	««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, 1-ին	1. Առաջարկում ենք ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) վերնագրից հանել երկրորդ, իսկ Նախագծի 1-ին հոդվածից օրենքի անվանումից հետո գրված «Հայաստանի	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ	**Ընդունվել է.**

		հոդված, ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր եւ 1-ին հոդված, ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիր	Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին եւ 1-ին հոդվածին, ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին:		
		««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, վերնագիր	2. ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրի «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է.**

			օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարվում են մեկից ավելի փոփոխություններ:		
		««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	3. Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 6.1-ին մասով սահմանվում է «Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը բաց թողնելը *կարող է* հարգելի համարվել, եթե դիմողը հիմնավորում է իրենից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) ժամկետը բաց թողնելու հանգամանքը»: Կարծում ենք նպատակահարմար է «բաց թողնելը կարող է հարգելի համարվել» ձեւակերպումը փոխարինել «բաց թողնելը հարգելի է համարվում» ձեւակերպմամբ:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է.**
		««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ	4. Նախագծի 3-րդ հոդվածում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով: Բացի այդ, Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ	**Ընդունվել է.**

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	«այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, կայացվել է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, ընդունվել է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքում կիրառվող տերմինները եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:		
		««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ	5. Առաջարկում ենք 6-րդ հոդվածի վերջին պարբերությունը համարակալել՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «*Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված*	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է.**

		կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	*<u>պարբերությունների</u>* »:		
		««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	6. Առաջարկում ենք ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Նոտարիատի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 22.1-ին կետի համարը տեքստից բաժանել «)» փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը՝ «*Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ <u>հոդվածների կետերի համարները՝ փակագծերով</u>* »:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է.**
		««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	7. ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կատարվում է հղում «Օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասը», մինչդեռ «Նորմատիվ իրավական	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է.**

			ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի* », ինչպես նաեւ նորմատիվ իրավական ակտին կամ հոդվածին հղում կատարելիս պետք է նշել նաեւ նորմատիվ իրավական ակտի անվանումը, հետեւաբար, առաջարկում ենք կա՛մ ամբողջությամբ նշել «Նոտարատի մասին» օրենքի անվանումը, կա՛մ 1-ին հոդվածում լրիվ ամվանումը կիրառելուց հետո փակագծերում նշել կրճատ տարբերակը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը:		